ՏԵՂԵԿԱՆՔ

(Քրեական օրենսգիրք Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածներում առաջարկվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ

ՕՐԵՆՍԳԻՐՔ

Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին

Հոդված 338. Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը

(վերնագիրը փոփ. 28.11.07 ՀՕ-278-Ն)

1. Քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալը, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալը, քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը, քաղաքացիական

դատավարության գործով մասնագետի կողմից ակնհայտ կեղծ բացատրություն տալը, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը, նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը՝
պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Նույն արարքը, որը՝
1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ,
2) զուգորդվել է այլ արհեստական ապացույցներ ստեղծելով,
3) կատարվել է շահադիտական դրդումներով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:
(338-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ. 07.07.05 ՀՕ-156-Ն, փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն, 28.11.07 ՀՕ-278-Ն, լրաց. 05.12.13 ՀՕ-147-Ն, 09.02.18 ՀՕ-113-Ն)